Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով Բժշկական պարագաների և բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

09.04.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Խաչատրյան – «Վեդիու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Անդամներ

Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

(Ս. Խաչատրյան)

Հիմք ընդունելով «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում էր առաջին տեղ գրված 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը. և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել առաջին տեղ գրված վերոնշյալ մասնակցին շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ են ներմուծվել շտկման ենթակա ապրանքների ամբողջական նկարագրերը կցվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը: Ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**

(Ս. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելված 1-ով.

Համաձայն կից ներկայացված գնային առաջարկների հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017թվականի թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Համակարգի կողմից մերժվել են Մասնակիցների հայտերը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գնման գները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

(Ս. Խաչատրյան)

«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման ապրանքների բնութագրի՝ օրենքով սահմանված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ –0

4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **ԱՁ Ռիտա Գասպարյան**-ին – **1-ին** չափաբաժնի մասով:
- **«Անիմեդ» ՍՊԸ**-ին – **7, 8, 9, 10, 11-րդ և 12-րդ** չափաբաժինների մասով:
- **«ԱԷՄՋԻ» ՍՊԸ**-ին - **15-րդ և 16-րդ** չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4.2 ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 5-րդ, 6-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**